

«Նրկու թռչուն» զրոյցի մէջ հեղինակը պատմում է, թէ ինչպէս վանդակում փակուած թռչուններից մէկը վատահոլթիւն ունեցաւ վանդակը բաց եղած ժամանակ թռչել և ազատութիւն գտաւ, իսկ միւսը, որ աւելի երկչոտ էր և գերութեան ընտելացած, չկամեցաւ ազատուել: Միւս բոլոր զրոյցներն էլ նոյնպէս գաղափարական և մէկը միւսից գեղեցիկ: Փափազեանի լեզուի մասին մի փոքր հասկացողութիւն տալու համար բերենք մի կտոր, որ կարծես թէ յանգերով գրած մի քնարերգ է:

Նւ գիտէր Ֆահրադը սիրել Շիրինին: Սիրել այն սիրով, որ աչքը գետնից ամպին է ձգում, ժայռեր հալցնում, ճահիճների տեղ վարդեր—աճեցնում, անապատի մէջ ծաղիկ բուսցնում: Սիրել այն սիրով, որ չէ խոնարհւում, կծկւում, ստրկանում, այլ որ ներշնչում է, ճղճիմ թզուկին հսկայի փոխում:—

Մի ուրիշ տեղ զրոյցի հերոսուհին այսպէս է արտայայտում իւր սէրը. Ջալիլէն ասում է Հասոին.

Ես քեզ սիրում եմ, այնքան եմ սիրում, որքան չի սիրում թիթեռը ճրագին, սոխակը վարդին, աշխարհը արևին և բոյսը հողին:

Փափազեանի այս զրոյցները ընթերցանութեան շատ հաճելի նիւթեր են և բոլոր դպրոցների գրադարանների գարդը կարող են լինել: Գրականութեան ուսուցիչը շատ օգտաւէտ դասախօսութիւնների առարկայ կարող է ունենալ, եթէ աշակերտներին կարդայ այս գիրքը լուրջ քննադատութիւններով: Ես մի անգամ կ'վերադառնամ Փափազեանի մասին նորից խօսելու:

Գ. ՅԱԳԻՐԱՐԻԱՆ

ՄՏԱՑՈՒՄ ԳՐԹԵՐ

Др. С. А. Майсүрияңъ Химіотерапія. „606“ при сифилисѣ. Тифлисъ 1910 тип. Т. Ротиніаңъ. Բժ. Մայսուրեանցը այս գեղուցումը կարդացել է կովկ. կայս. բժշկ. ընկերութեան ժողովում: Սա. Կանայեանց. Ջոշանց տուն կամ Սասմայ ծռեր վէպի

երեք փոփոխակ. առաջին և հիմնական օրինակը մատակարարել է փոխադրողին Գիւտ. աք. Աղանեանցը, Վաղարշ. 1910 տպ. ս. էջմ.

Ներսէս ք. տէր-Կարապետեանց. Ապաշխարութիւն. քարոզ, որ հեղինակը խօսել է Բագուի յ. Լուսաւորիչ եկեղեցում 1910 ապրիլի 4-ին. տէր հայրը այն սակաւթիւ քարոզիչներից է, որոնք միշտ տպաւորութիւն են գործում ունկնդիրների վրայ. այս քարոզի մասին շատ լաւ կարծիք է յայտնել Պօլսի Թերթերից մէկը և առհասարակ կարդացւում է հետաքրքրութեամբ. ափսոս որ քաղմածիւ սխալներ շատ տեղ անհասկանալի են դարձնում գրուածքի իմաստը: Բագու 1911 տպ. Ս. Շահրադեանց.

Մ. Չմշկեան. տարեցոյց 1911 թ. Թիֆլ. տպ. Ռօտինեանց.

Արսէն Տէրտէրեան, Վահան Տէրեան ցնորքի, ծարաւի և հաշտութեան երգիչը. Թիֆլիս. 1910 տպ. Հերմէս.

Սէյրի. Դիրեկ կամ անմահութիւն. մանուկների համար. Թիֆլիս 1911 տպ. Նոյն.

Տեղեկագիր 1908—1909 ուս. տ. Մար. Յոֆլ. օր. դպրոցի Թիֆլ. 1911 տպ. Նոյն:

Հենրի գրումմոնդ. Ամենագեղեցիկ բանը կեանքում. գերմ. թարգմ. Արտակ Վ. Սմբատեանց. Վաղարշ. 1911 տպ. ս. էջմ.

Բժշ. Ա. Բաբայեանց. եկեղեցական առողջաբանութեան հարցեր. Բ. Վաղարշ. 1911 տպ. Նոյն.

Ա. Պուշկին. Քնած դշուհին և եօթն քաջերը. հրատ. Հասկեր ամսագրի. փոխ. Աթ. Խնկոյեան. Թիֆլիս 1911 տպ. Ն. Աղանեանի.

Իրացոյց Հայոց Ազգագրական ընկերութեան: Պրակ ա. Թիֆլիս 1911 տպ. Ն. Աղանեանի.

Հաշիւ Ն. Նախիջևանի յ. Խաչ Ղանքի վանական կառավարութեան 1910 թ. Ն. Նախիջևան տպ. Ս. Աւագեանի.

Տեղեկագիր Թիֆլիսի Վանաց աւագ եկեղեցու կրօնա—պատմական թանգարանի ֆիայուն վարչութեան 1910 ապրիլ 5—1911 ապրիլ 5, 1911 Թիֆլիս տպ. Աղանեանի:

Աւետիս Ղուկասեան և նրա կտակը. գրեց Գիւտ Աղանեանց ա. ք. 1911 Թիֆլիս, տպ. Ն. Աղանեանի.

Թադ. Աւագբէգեան Խաչատուր Արովեան. պատմական—գրական վերլուծութիւն. Վաղարշապատ 1910 տպ. ս. էջմիածնի.

Ներսէս ք. Տէր Կարապետեանց. Խաչատուր Արովեանց. կենսագրութիւն. ք. տպ. 1911 Թիֆլիս, տպ. Ն. Աղանեանի: Այս աշխատութիւնը հեղինակի ճեմարանական դիսերտացիան է և սրա առաջին տպագրութիւնը արտատպուած է «Լումայ» հանդիսից:

Պառաւաշունչ, Զաւախքի հէքիաթներէց, գրի առաւ Ն. Լալայեանց, Ալէքս. 1911 տպ. Ա. Մալխասեանցի: Այս բրօշուրը հրատարակել է Կովկասի Հայոց ազգագրական ընկերութեան Ախալքալաքի ճիւղը:

Բժ. Մինաս Մուրաթեան. Սիֆիլիս. հանրամատչելի պատկերազարդ. Թիֆլիս 1910 տպ. Նադէժդա: Սիֆիլիսի հիւանդութեան մանրամասն նկարադրութիւն է իր բժշկութեան հին եղանակի վերլուծութեամբ: Ափսոս սակայն, որ հեղինակը չէ աւելացրել և էրլիխի բժշկութեան նոր եղանակի մանրամասն նկարագիրը:

Լ. Ն. Տօլստոյ. վէպիկներ. պատկերով. Մոսկուա 1911 տպ. Մ. Բարխուդարեանի: Հրատարակել է բազուցի յայտնի հարուստ Մովսէս Բուդաղեանը իր որդի Նիկողայոսի յիշատակին. Թարգմանութիւնը կատարուած է բարեխղճաբար և ապագրութիւնը մաքուր:

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան. Հայոց եկեղեցին և իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը, ու ներկայ կացութիւնը: Կ. Պօլիս 1911. տ. Վ. և Հ. Տէր-Ներսէսեան:

Մաղաքիա արք. Օրմանեան—Նոյն ֆրանսերէն բնագիրը: Պարիզ 1911.

Նոյն հեղինակի, Համապատում. պատկերազարդ. Կ. Պօլիս 1911.

Պետրոս Բերուբեան. Ալէքսանդրապօլի առևտրական դպրոցը և այդ դպրոցի բարեփոխութեան հարցը: Ալէքս. 1911 տպ. Շիրակ.

Կ. Կոստանեան. մի էջ Արդութեան օրիորդական դպրոցի պատմութիւնից. դպրոցի քառասնամեկին հրատարակեց Տիրուհի Կոստանեանց, Յովսէփ արք. Կոստանեանցի պատկերով. Թիֆլիս 1911 տպ. Ն. Աղանեանի.

Սիմէօն Յակոբեան. Շիրվանզադէ, գրական-քննադատական ուսումնասիրութիւն Թիֆլիս 1911 տպ. Ն. Աղանեանի. Պ. Յակոբեանը Շիրվանզադէի յօդուքների առիթով լոյս է հանել այս լուրջ ուսումնասիրութիւնը, ուր անաչառօրէն վերլուծուած են Շիրվանզադէի բոլոր մինչև այժմ լոյս տեսած երկերը մանրամասն և հմուտ կերպով, ուր մանաւանդ աչքի է ընկնում հեղինակի գեղեցիկ և ճկուն լեզուն:

М. В. Побѣдинскій. С. П. Бургские счетоводные курсы, С. П. Б. 1911 С. П. Б. высшие Коммерческие курсы. С. П. Б. 1911

Վլ. Դիւեարովսկի. փախստական. հրատ. Մոսկ. մի խումբ ուսանողների Մոսկուա 1910 տպ. Բ. Բարխուդարեանի.

Վ. Նեմիրովիչ—Դանչենկո. Նրանք հինգն էին. թարգմ. օր. Մենիկ Թումանեան, Յ. Յոնանեանի ծախքով. Մոսկ. 1910 տպ. նոյն.

Գաջրերունի. Բադա գիւղի աւերումը. Վաղարշ. 1910 տպ. ս. էջմ. արտատպուած է Արարատից:

Դր. Տէր-Պօղոսեան. Լեւնականք. Ա. փորձ կովկասեան ժողովուրդների համեմատական ազգագրութեան. Ուրուսի. Շուշի 1910 տպ. Մ. Բաբաջանեանի.

Օրացոյց 1911 ս. էջմիածնի.—շնորհակալութեամբ ստացուած ամեն. Հայոց Հայրապետի Տեղակալից. և նոյնը ս. Երուսաղէմի, ստացուած Երուսաղէմի ամեն. պատրիարքի տ. փոխանորդից:

Զաւէն վարդ. Դէպի գեղարուեստի հայրենիքը. ուս. ճանապ. դէպի Յունաստան, 1910 Բաղու տպ. Ս. Շահբաղեանի.

Արսէն Տէրտէրեան. Միքայէլ Նալբանդեան ազգութեան հրապարակախօսը. Ալէքս. 1911 տպ. Յ. Ղասապեանցի:

Դ. Շէրենց. Ալթուն Դէրիսի կամ մի գիշեր Բաղէշի բանտում. 1893—96. 1910 Թիֆլիս. տպ. Պրգր.

А. С. Бабовъ. Къ вопросу объ открытіи высш. учебн. заведенія на Кавказѣ. Тифл. 1911

Ս. Զեքէզեան. Օրմանեանը զրպարտութեան ցանցերում. Թիֆլիս 1911. Ժողովածու հեղինակի մի շարք լրագրական յօդուածների, որ նա տպում էր «Կօշմարը անցնում է» վերնագրով:

Վ. Փափաղեան. զրոյցներ. Շուշի 1911.

Յովհ. Թումանեանի թարգմ. Լեզուն կտրած ծիտիկը. եսպօնական հէքիւթ. Թիֆլիս 1911.

Ստեփաննոս Օրբէլեան. Հրատարակութիւն Առկասեան Թանգարանի Դ. Թիֆլիս 1911 տպ. Ն. Աղ.

